ԴՈՓԱՊԱՐԸ՝ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽՈՐԵՈԳՐԱՖԻԱՅԻ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՄԱՍ

ՂԱՄԲԱՐՅԱՆ Ս. Ս.

Պարարվեստը գոյություն ունի հնագույն ժամանակներից ի վեր: Դեռևս վաղնջական օրերում կրոնական, աշխատանքային, որսորդական և այլ ծեսեր ուղեկցվում էին ոչ միայն երգ-երաժշտությամբ, այլ նաև պարով: Պարային ներկայացումները հաճախ կապվում էին կրոնական արարողությունների հետ, որոնք կատարվում էին Հին Եգիպտոսում, Հայաստանում, Հռոմեական կայսրությունում Հնդկաստանում, Չինաստանում և այլ երկրներում:

Պարարվեստը բավական վիճահարույց գիտություն է: Շատ մասնագետների կարծիքով, դժվար է սովորեցնել այն, ինչն իրականում չի կարելի սովորել: Դա կոմպոզիտորի, կատարողի և բեմադրողի ստեղծագործական միությունն է, արվեստ է գիտության շրջանակում, որում միախառնվում են հոգևորի և աշխարհիկի եզրերը՝ ստեղծելով աներևակայելի, նյութական աշխարհից վեր իրականություն[1]:

Պարարվեստի զարգացումը նպաստեց խորեոգրաֆիայի սկզբնավորմանը: «Խորեոգրաֆիա» հասկացությունն առաջացել է մոտավորապես 1700 թ.: Այն պարեր և պարային ներկայացումներ ստեղծելու արվեստ է, պարային կանոններով, երաժշտության ուղեկցությամբ, շարժումների և անսահման իմպրովիզացիայի ձևավորված համակարգ: Նաև շարժումներն ու տեխնիկան գեղարվեստորեն արտահայտելու հրաշալի միջոց է, որը, ստեղծելով խորեոգրաֆիկ կերպար, արտահայտում է մարդու հոգևոր աշխարհը[2]:

Դոփապարը (ստեպ) խորեոգրաֆիայի յուրահատուկ, վառ, հստակ, հարուստ և հագեցած մի տեսակ է, որը պարային այլ ոճերի հետ շարունակում է զարգանալ՝ ավելի ու ավելի նոր հատկանիշներ ընդգրկելով:

Կան մի շարք վարկածներ դոփապարի վերաբերյալ: Դրանցից մեկի համաձայն՝ ստեպ պարի օգտագործումը ժամանակակից խորեոգրաֆիկ դաստիարակության մեջ նպաստում է շարժումների համակարգի և ռիթմի

---

[1] Шереметьевская Н. Е. *Прогулка в ритмах степа, М., 1996, с. 17.*

[2] Никитин В. Ю. *Инновационный подход к профессиональному обу-чению балетмейстеров современного танца, М., 2007, с. 28.*

զգացողության զարգացմանը[3]: Ներկայումս դոփապարը լայն տարածում է գտել ողջ աշխարհում: Արվեստի այս տեսակը ձևավորվել է Ամերիկայում, ժամանակի ընթացքում զարգացել, և այսօր բազմաթիվ փառատոներ և դոփապարի մրցույթներ են անցկացվում աշխարհի տարբեր մասերում:

Նշենք, որ հասարակությունների զարգացումն արտացոլվում է նաև ազգային արվեստի և մշակույթի ողջ պատմության մեջ: Ուսումնասիրելով մշակույթի զարգացման օրինաչափությունները՝ կարելի է բացահայտել նաև դրա հատկանիշներն ու առանձնահատկությունները: Եվ քանի որ ցանկացած առաջընթաց փաստում է արդեն իսկ կայացածի շարունակությունը, ուստի այն առավել հստակ է, եթե հիմքն ամուր է: Դոփապարը օտար մշակույթ է, ուստի նրա ուսուցումը պետք է սկսել ոչ միայն ուսումնասիրելով ավանդական դոփապարի հիմունքներն ու մեթոդները, այլ նաև ծանոթանալով տվյալ ժանրի ժամանակակից միտումներին, անհրաժեշտ է ներդրում ունենալ դրա զարգացման մեջ՝ համատեղելով այս ժանրի հիմունքները, օրինակ, ավանդական հայկական պարի սկզբունքների հետ:

Դոփապարի ժանրը բազմազան է, հետաքրքիր և զվարճալի: Այսպես, Ֆրեդ Ասթերի կամ մեկ ուրիշի դոփող պատկերները հիացնում են հանդիսատեսին՝ նրան կտրելով առօրյայից և տանելով երաժշտության ու ռիթմի աշխարհ: Նշենք, որ «ստեպ» (step) բառը անգլերենից թարգմանաբար նշանակում է «քայլ»: Քայլ առ քայլ, նոր շարժումն ընկալելով՝ դոփապարողը սկսում է շարժվել տարածության մեջ՝ ստեղծելով գեղեցիկ և ռիթմիկ պատկեր: Ստեպն ունի նաև ուրիշ անվանում՝ tapdance, որ դարձյալ անգլերեն է, նշանակում է «զարկող, հարվածող» պար[4]:

Հատկանշական է, որ դոփապարի զարգացման պատմությունն սկզբնապես կապված էր երաժշտական ոչ թե պարային ավանդույթի հետ: Հավանաբար, հենց այս պատճառով, որոշ տեսաբաններ դոփապարը դասում են ոչ թե պարարվեստի, այլ երաժշտության բնագավառին (հիշենք հայտնի՝ «ստեպը ոտքերի երաժշտություն է» արտահայտությունը)[5]:

Դեռ հին ժամանակներում մեր նախնիները իրենց աստվածների հետ «հաղորդակցվել են» ռիթմի միջոցով: Նրանք ոտքերով հարվածում էին

---

[3] **Кирсанов В. И.** *Тэп танец: история, теория, практика, М., 2012, с. 50.*

[4] *Նույն տեղում, էջ 21:*

[5] *Նույն տեղում, էջ 33:*

հատակին, ձեռքերով՝ թմբուկներին, այդ կերպ ընկնելով խանդավառության մեջ՝ «հաղորդակցվում» աստվածների հետ[6]:

Դարեր շարունակ դոփապարը զարգացել և լրացվել է աշխարհի տարբեր ժողովուրդների կողմից, ընդ որում, յուրաքանչյուր ազգ ունի դոփելու իր ուրույն ոճը: Օրինակ, իսպանացիների մեջ այն դրսևորվում է ֆլամենկոյի, արգենտինացիների մեջ՝ Գաուչոյի կամ Բալեռդորեսի ձևով իռլանդացիները պարում են ծանր կոշիկներով, ամերիկացիները՝ tapdance, գնչուները և ռուսները՝ չեչոտկա (clogging) և այլն[7]:

Մինչ օրս հայտնի չէ, թե ով է ժամանակակից դոփապարի նախահայրը, քանի որ աշխարհի բոլոր երկրներում ռիթմը համարվում է կյանքի հիմք, և բոլոր ժողովուրդներն էլ իրենց մտքերն արտահայտում են հարվածող (զարկող) պարի միջոցով: Նույնը կարելի է ասել նաև հայկական ծիսական պարերի մասին. դրանք մեր նախնիներից ժառանգություն ստացած ժողովրդական պարի այն մասն են, որը ներառել է նաև կենցաղը՝ կապված տարեկան տոների, հարսանիքների, մահ-թաղում-սուգ արարողակարգերի հետ, ինչպես նաև արտակարգ իրադրություններին առնչվող ծեսերն ու արարողությունները: Օրինակ, «Քոչարին», որը Հայկական լեռնաշխարհում ամենատարածված և ներկայումս ամենապահպանված հայկական պարն է, պարել են նաև ճակատամարտից առաջ. այս հայկական ավանդական պարը ռազմիկներին օգնում էր տրամադրվել սպասվող պայքարին, ինչը ընկալվում էր որպես ռիթմերի օգնությամբ աստվածների հետ հաղորդակցվելու միջոց, ինչպես արվում էր դոփապարում: Դա ևս փաստում է, որ հնագույն ժամանակներից ռազմական ու ծիսական պարերը եղել են հայ ազգի ավանդույթների անբաժան մասը: Բազմաթիվ են նաև հայկական պարային ռիթմերը, որոնց մեջ ևս առկա են դոփապարի տարրեր և՝ հակառակը: Որքան էլ զարմանալի և տարօրինակ հնչի՝ միգուցե դոփապարի հայրենիքը հենց Հայաստա՞նն է:

Մեզ հասած tapdance-ը համաշխարհային մշակույթի հարստություններից է: Հատկանշական է այն փաստը, որ մինչ այսօր էլ զարգացնում և բարդացնում են այդ պարը՝ դրա միջոցով փորձելով ձևավորել մարդու անհատականությունը:

---

[6] *Նույն տեղում, էջ 15:*

[7] *Նույն տեղում, էջ 16:*

Դոփապարի առաջացումը կապված է Ամերիկայում ստրկավաճառության զարգացման հետ, որը հանգեցրել էր բոլորովին տարբեր՝ եվրոպական և աֆրիկյան մշակույթների անխուսափելի միաձուլմանը: Հենց սա էլ եղավ նոր տեսակի երաժշտության սկիզբը, որը հետագայում պետք է դառնար նոր պարատեսակ: Ամերիկացի ստրկավաճառները անհանգստացած էին, որ սևամորթ ստրուկները կարող են խռովություն և ապստամբություն բարձրացնել: Եվ իմանալով, որ աֆրիկացիները թմբուկների մի-ջոցով հեռու տարածության վրա գաղտնի ազդանշաններ են փոխանցում, վերջիններիս արգելեցին օգտագործել տարբեր հարվածային գործիքներ: Այդ իսկ պատճառով ստրուկները կրոնական արարողությունների և տոների ժամանակ սկսեցին ռիթմեր հարվածել ոտքերով (իսկ ինչ աֆրիկյան տոն առանց ռիթմի)... Դեռ այն ժամանակ հայտնվեցին մեզ հայտնի shuffl'-ը, stopm'-ը և այլ հիմնական հարվածներ[8]: Ռիթմային պատկերներն աստիճանաբար բարդանում էին, սակայն էությունը մնում էր նույնը. այն է՝ ռիթմի միջոցով արտահայտել երաժշտության հուզական հիմքը:

Ժամանակակից դոփապարին բնորոշ է ոճերի բազմազանությունը: Ամենահիմնական ոճերն են՝ չեչոտկան, ֆլամենկոն՝ իր բոլոր տեսակներով, այդ թվում նաև սապատեոն, իռլանդական hard shoe dance-ը և ստեպ կամ tap dance (իրական ստեպ) հարավամերիկյան ստեպը: Դոփապարը կարող է ներառել նաև ջազային ոճեր և ուղղություններ: Այս պարառճում չկան ձանձրույթ, թախիծ և անտարբերություն: Կատարողները համոզված են, որ իրենց կենսուրախ և բուռն պարով կարող են բոցավառել ունկնդիրների սրտերը:

Ոչ մի եղանակ չի կարող խոչընդոտ լինել պարի համար: Հատկապես այնտեղ, որտեղ իշխում են ճշմարիտ զգացմունքները, առկա է հնչեղ ներբանով մի զույգ կոշիկ՝ տոնական տրամադրությունն ապահովված է: Դոփապարի ռիթմը ոչ միայն զարգացնում է երաժշտականությունն ու ներդաշնակ պլաստիկան, այլ նաև դաստիարակում է թեթևություն, անհոգություն և բնականություն: Այս պարային ժանրում կարևոր են ինչպես անհատի մասնագիտական, այնպես էլ անձնական հատկանիշները: Դոփա-պարողը միշտ ներքուստ կենտրոնացած և արտաքուստ ազատ է[9]:

---

[8] Նույն տեղում, էջ 25:

[9] **Astaire F.** *Steps im Time, NY, 1959, p. 121.*

Գոյություն ունեն դոփապարի տեսակներ, որոնք չի կարելի է շփոթել ոճերի հետ, քանի որ յուրաքանչյուր այս կամ այն տեսակ կարող է բնորոշ լինել ինչ-որ ոճի: Օրինակ, ամերիկյան և ռուսական, անգլիական և ռուսական ոճերում առկա է ակրոբատիկ դոփապարը: Այն տարածված էր XX դ. 30-ական թթ. և ներկայացնում էր երկու բոլորովին տարբեր տեսակների միացում՝ պարարվեստի և սպորտի՝ չեչոտկա և ակրոբատիկա: Սակայն տեղի չի ունենում նրանց միաձուլում: Դոփապարի տարրերն օգտագործվում էին ակրոբատիկ համարների միջև կամ նրանց կատարման ժամանակ: Կատարման ժամանակ, առաջին հերթին, հիմնվում ենք դասական դոփապարի վրա, քանի որ առանց դրա ուսումնասիրության, անհնար է հասկանալ դոփապարի ամբողջական մեթոդաբանությունը:

Դասական դոփապարի պարագայում պետք է ուշադրություն դարձնել ջազային դոփապարի հիմնական տարրերին: Իսկ դասական դոփապարը ներառում է դասական պարի հիմնական տարրերը:

Ցավոք, Հայաստանում ներկայումս կան դոփապարի սակավաթիվ կատարողներ, որոնք արժանի են լավ ուսուցիչների, դպրոցների, մեթոդիկայի և այն ամենի իմացության, ինչը կազմում է տվյալ պարատեսակի հիմքը, առանց որի հնարավոր չէր լինի քայլել ժամանակին համընթաց: Մենք չունենք հրաշալի վարպետներ, պարողներ, յուրօրինակ և ինքնատիպ կատարողներ, որոնք յուրովի կմեկնաբանեին դոփապարը: Շատ քիչ են տվյալ պարատեսակի հիմունքներին և մեթոդիկային, ինչպես նաև այս ժանրի արդի միտումներին քաջատեղյակ լավ մանկավարժներն ու պարուսույցները, որոնք հասկանում են ժամանակակից դոփապարի հանպատրաստից ստեղծագործելու բնույթը:

Այսպիսով, պարային շարժման նոր ոճի և տեսակի ստեղծումը Հայաստանում դեռևս չի նկատվում: Մեր երկրում դոփապարի գրեթե բոլոր ուսուցիչները հիմնականում փոխառում են արդեն պատրաստի համարներ այլ երկրներից (առավելապես ներառում են իռլանդական ոճը):

Այսօր դոփապարը ժամանակակից խորեոգրաֆիային հնարավորություն է տալիս լինելու ավելի բազմազան և ուշագրավ, ամենատարբեր խորեոգրաֆիկ ներկայացումներին հանպատրաստից պարելու անսահման հնարավորություններ է ընձեռում, ինչպես նաև օգնում է ավելի լավ հասկանալ կերպարը և պատկերներն ավելի ամբողջական դարձնել:

СТЕП КАК СОСТАВНАЯ ЧАСТЬ СОВРЕМЕННОЙ ХОРЕОГРАФИИ

ГАМБАРЯН С. С.

Резюме

Искусство танца восходит к древности. Степ-танец является ярким и в своем роде уникальным видом хореографии, который продолжает развиваться, включая в себя новые виды танца.

История возникновения степа, который своими корнями уходит в XVIII в., связана с музыкальной, а не танцевальной традицией, в силу чего ряд теоретиков относят степ не к танцевальному, а музыкальному искусству.

Степ-танец характеризуется множеством направлений и стилей. Современный степ-танец включает в себя разнообразные виды и стили, которые следует отличать друг от друга, помимо этого нужно научиться сочетать особенности данного жанра с традиционной армянской школой танца.

TAP DANCE AS A PART OF MODERN CHOREOGRAPHY

S. GHAMBARYAN

Abstract

The art of dance dates back to ancient times. Tap dance is a bright and unique type of choreography, which continues to develop, involving new types of dance. The history of emergence of the step dance, which has its roots in XVIII century, is not connected with the dance tradition, but rather with the music, and for this reason a number of theorists classify the step dance not as dance art, but music art. Tap dance is characterized by a variety of types and styles. Modern step dance includes a variety of types and styles, which should be distinguished from each other; moreover one needs to learn how to combine the features of this genre with the traditional Armenian dance school.